ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 14 -Ա

« 19 » ՀՈՒՆՎԱՐԻ 2026Թ.

## ԿԱՐԻՆԵ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻՆ «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԻՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՆՐԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» N181-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով և հիմք ընդունելով Կարինե Արզումանյանի դիմումը՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.**

1. Կարինե Արզումանյանին նշանակել «ՀՀ Վայոց ձորի մարզի Արինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, նրա հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ մինչև օրենքով սահմանված կարգով թափուր պաշտոնի հիմքի վերացումը: Աշխատանքը սկսել 2026 թվականի հունվարի 20-ից:
2. Կարինե Արզումանյանին ազատել «ՀՀ Վայոց ձորի մարզի Արինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումից:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KHACHATRYAN ARSEN 3902800330 Կ. ԱՐՍԵՆՅԱՆ

ք. Եղեգնաձոր